

ԵՂԵ՛Լ Է. ԱՐԴՅՈՔ. ԱՓԱՏԻՐԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ
ՖԵՈԴԱԼԱԿԱՆ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ*

Գ. Ե. ԳՅՈՒԼԱՄԻՐՅԱՆ

Ափատիրական իրավունք (Сереговое право) ասելով՝ լուրժուական դիտությունը հասկանում է ծովափին, լճափին կամ գետափին հարող հողերի տիրապետության իրավունքից բխող իրավական նորմաների ամբողջությունը: Ափառնակ հողատիրոջ իրավունքը աստիճանաբար ընդլայնվում է, և ավամերձ հողերի տերը ձեռք է բերում որոշ տարածության վրա ձուկ որսալու միայն նրան պատկանող իրավունք: Անտիկ աշխարհում և եվրոպական ֆեոդալիզմի դարաշրջանում ծովային ափատիրական իրավունքի համաձայն ափամերձ հողի տիրոջն էին պատկանում նավարկության հետևանքով փոթորկի ափ նետած ոչ միայն նավն ու ասորանքները, այլ նաև մարդիկ: Գետային ափատիրական իրավունքը հանգում էր գլխավորապես այն բանին, որ առափնյա և ֆերձակա հողերի տիրոջը գետի հունում ձուկ որսալու և նավարկության իրավունք էր վերապահվում:

Ափատիրական իրավունքն Արևելքում սահմանափակ բնույթ ունի: Այն հիմնված է գլխավորապես ջրատիրության իրավահարաբերությունների, ջրի մատուցների, հետևապես, հողատիրության, հողային հարաբերությունների և համապատասխան իրավական նորմաների վրա, որով այդ իրավունքը հիմնականում ուղղման նպատակներ է հետապնդում: Այդ առանձնահատկությունների հետևանքով Արևելքում, մասնավորապես Անդրկովկասում, ափատիրական իրավունքի հարցը լուծելու համար չի կարելի ելակետ ունենալ եվրոպայում գոյություն ունեցած ափատիրական և ջրային իրավունքի նորմաները, ինչպես այդ անում են որոշ հետազոտողներ:

«Ջրանցքների և ջրային կառուցվածքների օգնությամբ կատարվող արհեստական ոռոգումը — դրում է Մարքսը, — հիմնված է հողագործության վրա»¹: Առանց ջրի հողը ոչ մի տնտեսական նշանակություն չունի: Ջուրը, հողը — գյուղատնտեսության արտադրողական ուժերի այդ տարրերը — բնա Մարքսի, ահարածան են և տնտեսական տեսակետից հողին է վերաբերում նաև ջուրը: Բայց այդ դեռ չի բացատրում այն փաստը, որ Արևելքում երբեմն հողի ու ջրի տերեր են լինում տարբեր անձեր, ուստի և գյուղացիությունը կրկնակի շահագործման է ենթարկվում: Մի կողմից նրան շահագործում են ջրատերերը, մյուս կողմից՝ հողատերերը:

* Ներկա հոդվածի ձևադիրը, որ զբաղված է ուսերեն, և տաքել ենք հայ ժողովրդի պատմության մասնագետ, հանգուցյալ Գ. Ե. Գյուլամիրյանի ժառանգներից — Սմ:

¹ К. Маркс и Ф. Энгельс, Сочинения, т. IX, էջ 347:

Սակայն, սովորաբար, պետությունը, ֆեոդալները կամ եկեղեցին իրենց անջրդի հողերում ջրանցքներ էին կառուցում և առանձին տուրք գանձում գյուղացիներից: Բարատլոր գրում է, որ Թուրքեստանում «Պարսկական կառավարությունը իր սեփական միջոցներով ամբարտակներ էր շինում, ոռոգման սիստեմներ կառուցում և ղրանցից օգտվելու համար առանձին վարձ էր գանձում բնակչությունից»¹:

Ճիշտ նույնպիսի դրույթուն գոյություն ունեւ ոչ միայն Թուրքեստանում, այլև Արևելքի մյուս երկրներում, որոնք աշխարհագրական միատեսակ պայմաններում էին գտնվում: Ն. Յա. Մառը, շոշափելով Պարսկաստանում գոյություն ունեցող ջրային տուրքի ու նրա չափերի հարցը, ձեռքի տակ ունեցած նյութի հիման վրա արձանագրում է. «Հայտնի է, որ Արևելքում ոռոգման ջրանցքներից օգտվելու համար սրոշ վարձ էր գանձվում. Պարսկաստանում ջրանցքներից օգտվելու համար հողագործներից ու այգետերերից գանձվող տուրքը եկամտի մի շատ կարևոր հոդվածն էր կազմում, ինչպես մասնավոր տերերի, այնպես էլ պետական գանձարանի համար»²:

Ապացուցելու համար, թե որքան մեծ էին ոռոգման կառուցվածքներից պարսկական կառավարության ստացած եկամուտները, Ն. Յա. Մառը բերում է Շարղենի վկայությունն այդ առթիվ. «...Նրա ասելով Պարսկաստանում թագավորական գանձարանի եկամուտների մեջ ջրային տուրքը հինգերորդ տեղն է գրավում»³: Նույնպիսի դրույթուն ենք գտնում մենք նաև Վրաստանում: «Պետք է ենթադրել, — գրում է Վ. Գուլենշտեյնը, — որ առաջներում կառավարությունը Վրաստանում վարձ է սահմանել ջրանցքներից տրվող ջրի համար: Կասկածից դուրս է, որ Կախեթիայի ոռոգման ջրանցքները հարկված էին XV դարի սկզբների «սարովսե» կոչվող տուրքով: Այդ հաստատվում է Բրոսսեի «Վրաստանի պատմությունը» հայտնի աշխատությունից բերված փաստաթղթերով: Ըստ այդ փաստաթղթերի, մի ոստիկանական աստիճանավոր (Ամիլախորի Խիմ. Արաշիձեն) Մծխեթի եկեղեցուն էր նվիրել իր գյուղացի Չերգիլաշվիլուն՝ նրա ամբողջ սեփականության հետ միասին, ինչպես նաև ջրանցքների համար իր գյուղացիների վճարած տուրքերը»⁴:

Էջմիածնի վանքն ու կաթողիկոսներն ամեն ջանք գործ էին գնում ոռոգման ջրին տեր կանգնելու համար: Նրան բաղմիցս խիստ դիմադրություն են ցույց տվել վանքին շոյատկանող շրջակա գյուղերը, որ ականերև կերպով երևում է Սիմեոն կաթողիկոսի գրվածքի հետևյալ կտորից.

«Դարձեալ ի յառնուլն Օսմանցւոց ղերկիրս մեր ի ՌՃԼԷ թուին տաճկաց (որպէս ասացաք ի բաղում տեղիս), ի նստիլ Ռաճապ փաշային յնրեան, դարձեալ հակառակին միւս ղեօղորայքն ընդ Աթոռոյս վասն ջրոյ գետոյս մերոյ. վասն որոյ և արդ առնեն Աստուածատուր Կաթողիկոսն և գեօղացիքս մեր Ռաճապ փաշային: Փաշայն ևս զայր ոմն յիւրայնոցն վերակացու կարգեալ հրամայէ զրով բաժանել զջուրն ղետոյն ի յերկուս ըստ առաջնոյ կանոնի,

¹ «К истории орошения Туркестана», էջ 7:

² Н. Я. Марр. О трех армянских надписях, Сборник материалов для описания местностей и племен Кавказа, էջ 194:

³ Նույն տեղում:

⁴ «Водовладение и ирригация», т. I, Тифлис, էջ 247—248:

զկէսն էջմիածնի տան, և զկէսն միւս քուան ղեօղորէիցն: Այս լինի ի ՌՃԼԸ թուին Տաճկաց»¹:

Սիմեոն կաթողիկոսի գրքի մի այլ հատվածից երևում է, որ էջմիածնի կաթողիկոսները առաջներում պահանջել են Քասախ գետի ամբողջ քուրն իրենց հատկացնել: Միայն շնորհիվ գյուղացիության համառ դիմադրության վանքին չի հաջողվել լրիվ իրազործել իր ծրագիրը:

Սակայն ջրի դալթած մասի համար նրանք գյուղացիներից հսկայական եկամուտներ էին կորցում, որի մասին են վկայում Հաքստհաուզենի հաղորդած տեղեկությունները՝ ի թիվս մյուս գյուղերի էջմիածնի վանքին պատկանող Վաղարշապատ գյուղի մասին: Նա գրում է. «...Դաշտերը վանքի սեփականությունն են և վարձակալության են տրվում գյուղացիներին... Տներն ու այգիները բնակիչների սեփականությունն են, բայց նրանք պարտավոր են դրանց համար մեծ տոկոսներ վճարելու վանքին»²: Յուրաքանչյուր ծխից ու նրան պատկանող այգիներից վճարվող տուրքը կազմում էր արծաթ փողով 2-ից մինչև 7 ուլլի, այսինքն՝ ընդամենը 1320 ուլլի արծաթ փողով, որի կանոնավոր վճարման համար պատասխանատու էր համայնքը: Կարծես, այդ տուրքը գանձվում էր ջուր մատակարարելու համար՝ վանքը ջրանցքներ էր անցկացրել և դրանք օգտագործելու համար տրամադրել գյուղին, որն իր հերթին պահպանում էր դրանք, և դրա «համար ջրանցքների ու առուների վրա հսկիչներ են կարգված, ինչպես այդ արվում է Երևանում»:

Մոտավորապես նույն ժամանակվա տեղեկությունների համաձայն, հարևան Պարսկաստանում գյուղացիությունը նույնպիսի կրկնակի շահագործման էր ենթարկվում իշխող դասակարգերի կողմից: Սեր-Մոդեր գյուղի մասին խոսելով, Բաումհարտենը գրում է. «Ի՞նչ ջուրը բավարար է, քանի որ հարավից հոսող ջրառատ առուն է բերում, այնուամենայնիվ, շատերը գանգատվում էին ջրի համար գանձվող ուժից վեր տուրքերի պատճառով, ասում էին, թե մեկ տրվա ընթացքում դաշտերը հոսող ջրի համար 70 դոան են վերցնում, իսկ յուրաքանչյուր տնտեսատիրոջ հարկավոր է 12 օր դաշտը ջրելու, բերքը հավաքելու համար, այդպիսով ստանում ենք ամեն մի տնտեսությունից գանձվող 840 դոան: Եթե նույնիսկ ընդունենք, որ այդ գումարը երկու անգամ չափազանցված է, ասկա դարձյալ ստացվում է տարեկան 84 ուլլի, մի զգալի գումար լոկ միայն ջրի համար»³:

Հաքստհաուզենի ասելով՝ մի բարձրաստիճան մոլլա կամ մուշտաիդ մեծ քանակությամբ ջուր էր ձեռք բերել, ջրանցք կառուցել և ջուրը ծախել շրջակայքի գյուղացիությանը, բնդ որում մի փոքրիկ գերմանական գաղութից, միայն այգիները ջրելու համար, նա տարեկան 500 ուլլի էր ստանում արծաթ փողով⁴:

Քաղաքների բնակչությունը ևս նույն ձևով շահագործման էր ենթարկվում ֆեոդալների ու առևտրա-վաճառողական տարրերի կողմից, որոնք ճիշտ նույն ձևով վալթել, իրենց ձեռքն էին առել ջրամատակարարումը և բնակիչներին հարկադրում էին դրա համար ծանր հարկեր վճարելու: «Պարսկական քաղաք-

¹ «Ջամբու», Վաղարշապատ, 1873, էջ 193—194:

² Гакстгаузен, Закавказский край, ч. I, СПб, 1857, էջ 2:

³ Шитов, Персия под властью последних Каджаров, Л., 1933, էջ 17:

⁴ Гакстгаузен, էջ 54:

ներում ջրանցքները մեծ մասամբ պատկանում են մասնավոր տերերին, որոնք զրանք կառուցել կամ գնել են և ջրից օգտվելու իրավունք տալու համար տուրք են ստանում»¹։

«Թեհրանի ամբողջ ջուրը գտնվում էր Սևիդ տնունով մի հարուստի ձեռքում, որն իր բաժնեկիցների հետ մի հիմնարկ բացեց «Միրա» անունով և լավ միայն անվան համար բնակչությունից հարկ ստացավ իր օգտին»²։

Ջուրը հողից բաժանելու և այն մասնավոր սեփականության մի առանձին տեսակ և դրանով էլ հենց վաշխառուական շահագործման միջոց դարձնելու այս երևույթը մենք գտնում ենք ոչ միայն ֆեոդալիզմի վերջին դարերում, այլև ավելի վաղ ժամանակաշրջանում։ Հայկական դատաստանագրքերից երևում է, որ Հայաստանում հողային ունեւոյի չափը XIII դարում հավասար է ջրային հարկին³։ Իհարկե, այդ մասին ուղղակի կերպով չի խոսվում, բայց այդ կարելի է անուղղակի կերպով եզրակացնել ջրովի և անջրդի հողերի հարկի կամ ունեւոյի չափերից, որոնք որոշված են Դատաստանագրքում։ Մխիթար Գոշը առաջին տեսակի հողերի համար սահմանում է $\frac{1}{5}$ մասը, իսկ երկրորդ տեսակի համար՝ $\frac{1}{10}$ ։ Սակայն, չնայած ոռոգելի հողերի բարձր տուրքին, Հայաստանում անշուշտ գոյություն է ունեցել հատուկ ջրահարկ։ Այդ պատճառով էլ այդ օրենքը ամենեին էլ չի արտացոլում դարաշրջանի ունեւոյ իրականությունը և անմիջական արտադրողի շահագործման աստիճանը։ Երակավանի հայտնի արձանագրության մեջ «ապուռիշ» և «ջրսահ» կարեւորագույն տերմինները ամենատարբեր ձևով են բացատրվել ու թարգմանվել դանադան հետադոտողների կողմից⁴։ Ն. Յա. Մառը վերը հիշատակված հողվածում վերլուծում է այդ արձանագրությունները և ցույց է տալիս, որ հայ ֆեոդալները հատուկ հարկ էին վերցնում բնական ու արհեստական ջրամբարներից։ Այդ տուրքերն անշուշտ դանձվում էին Դատաստանագրքում հիշատակված հարկից դուրս, ինչպես այդ երևում է հետևյալ տեքստից. «Ի թվ. Ուէ (1228) շնորհին աստուծոյ ևս Աթաբէկ Իւանէ ևւ Խոշակս Վրաց և Հայոց թագոհի վասն երկար կենդանութեան հարադատաց մերոց Մանդատորթա խուցէս Շահնշահի ևւ ամիր սպասալար Աւագին թողութ զգեղիս Շիրակս զապուռիշի ևւ զջրսահին բաժն յորդիցէ յորդիք ադատի բաժէն. արդ եթէ որ յետ մերի մեծամեծաց կամ ի փոքունց զգիր հրամանաց մերոց խափանել ջանա յաստուածային փառացն ևւ ՅժԲ հայրապետացն նդովհալ եղիցի ի մահ և ի կենք»⁵։

Այսպիսով, մենք տեսնում ենք, որ այդ շրջաններում ջրային հարցի շուրջը ստեղծվել են ոչ պակաս բարդ հարաբերություններ, քան հողային սեփականության հարցի շուրջը։ Այդ է եղել, հավանաբար, պատճառը, որ Արևելքի պատմությունը և Արևելքում ստեղծված սոցիալական հարաբերությունները հետադոտողներն այս կամ այն չափով շոշափում են ջրային հարցը և այս կամ այն նշանակությունն են վերագրում նրան։

Շնորհիվ այն մեծ նշանակության, որ ունի ջուրը հողագործության համար (իսկ որոշ շրջաններում նրա ունեցած վճռական նշանակության), հարց է ծա-

¹ Гакстгаузен, էջ 214։

² Шитов, էջ 17։

³ Մխիթար Գոշ, Դատաստանագրքեր. Վաղարշապատ, 1880, մ. 11, էջ 314—315։

⁴ Տե՛ս Н. Эми, Армянские надписи в Карсе и Ани, 1881, էջ 51։ Այլ շան, Շիրակ, էջ 10։

⁵ И. Я. Марр, О трех армянских надписях..., էջ 195—196։

գում, թե այդ տարրերից որն է եղել սեփականության նախնական հիմքը: Այստեղից էլ բխում է Արևելքում «ֆեոդալիզմի ջրային հիմքի» տեսությունը: Ս. Պ. Տոլստոյը գտնում է, որ «Դրա հետ միասին ֆեոդալական տիրապետությունը հենց սկզբից կապված է եղել ոչ քե հողի, այլ ջրի հետ: Դրա ակներև ապացույցն է Միջին Ասիայի նախամուսուլմանական և վաղ-մուսուլմանական ֆեոդալների ղեկավարների կառուցումը ոռոգման սիստեմների գլխամասերում, որպիսի հանգամանքը ֆեոդալին թույլ էր տալիս ամրոգջովին ջրից կախված գյուղացիական բնակչության կյանքի ու մահվան տերը լինել, «որին ջուր տալու կամ չտալու իրավունքը արխի (ջրանցքի) գլխամասի տիրոջ ձեռքին էր»¹:

Մտադիր շենք ժխտելու այն տնտեսական, հետևապես, նաև քաղաքական հսկայական ուժը, որ ձեռք էին բերում ոռոգման կառուցվածքների տեր հանդիսացող անձինք: Ընդհակառակը, այդ հանգամանքը հաստատում են ֆեոդալական Հայաստանի իրականությունից վերցրած բազմաթիվ փաստեր: Մեր նպատակն է՝ բացահայտել տվյալ հողի վրա ստեղծված տնտեսական ու սոցիալական հարաբերությունները ֆեոդալական Հայաստանում և ցույց տալ, նախ՝ իրավական դպրոցի ներկայացուցիչ հայ պատմաբանների այն «տեսություն» սխալը, թե ջուրը, որպես «բնության շնորհ», իր բնական ջրամբարներում պատկանելիս է եղել ամենքին, և ամենքն էլ հնարավորություն են ունեցել ազատ կերպով նրանից օգտվելու իրենց կարիքների համար և երկրորդ՝ երևան հանել այն տեսակետի սխալը, որն իրարից անջատում է գյուղատնտեսության գլխավոր արտադրողական ուժերը՝ հողն ու ջուրը և դրանք նկատում որպես առանձին կատեգորիաներ այն ժամանակ, երբ իրականության մեջ արտադրողական ուժերի այդ երկու տարրերի առանձնացումը ֆեոդալիզմի դարդացման հետևանքն է և կապված է գյուղական համայնքի քայքայման հետ, որքան ուժեղ է եղել համայնքը, այնքան ավելի շատ զիմադրություն է ցույց տվել նա ֆեոդալների՝ ջուրը հողից բաժանելու ձգտումներին:

Չնք կարող համաձայնել այն պնդման հետ, թե իբրև Արևելքում հենց սկզբից ֆեոդալիզմի հիմնված է եղել ջրատիրության և ոչ թե հողատիրության վրա: Արտադրողական ուժերի այդ երկու տարրերը միմյանցից անջատելն սկզբունքորեն հնարավոր չէ: Եվ, բացի դրանից, այդպիսի հարցադրումը ակրնհայտ հակասություններ է պարունակում՝ նախ, ոռոգման սիստեմների գլխամասերում ղեկավարն ունենալուց առաջ պետք է լինել որևէ այլ ձևով ձեռք բերված տնտեսական առավելություն, մանավանդ եթե առկա է արհեստական կառուցվածքը (ոռոգման սիստեմ); որը շինել են ինքը՝ տերը, կամ նրա նախնիները. եթե այդ կառուցվածքը յուրացված է համայնքից, ապա առավել ևս ստույգ է տնտեսական առավելության փաստը, որքանով որ յուրացնողն անկասկած պետք է քաղաքական ուժ ունենար, երկրորդ՝ եթե դրվում է ոռոգման ջրանցքների կառուցումից առաջ ֆեոդալների գոյության հարցը, ապա ինչ հարկ կա պնդելու, թե ֆեոդալների տիրապետությունը հիմնված է ոռոգման սիստեմի վրա, կամ կապված է նրա հետ: Գուցե այդ արդեն նշանակում է, թե ֆեոդալը կարող է բռնության տեր դառնալ ոռոգման սիստեմին կամ կարող է ինքը կառուցել այն և դրանով իրենից տնտեսական կախման մեջ գնել ջրանցքներն օգտագործող գյուղացիներին: Որքանով որ հողն առանց ջրի տրն-

¹ С. П. Толстов, Очерки первоначального ислама. «Советская Энциклопедия», 1932, т. 2, 41:

տեսակետն նշանակություն չունի, ալի չափով ջրի իրավունքին տեր դարձած ֆեոդալը վերջին հաշվով նաև հողի տերն է։ Այդպիսի դեպքում ջրատիրությունը վեր է ածվում հողատիրության միջոցի։ Կասկածից դուրս է, որ Արևելքում ֆեոդալիզմը նույնպես, վերջին հաշվով, խոշոր հողատիրության վրա է հիմնված։ Ջրատիրության հիման վրա չէ, որ սկսած է որոշել արևելյան ֆեոդալիզմի առանձնահատկությունը։ Հարցը կարող է վերաբերել ջրատիրությանը հասնելու բնույթին, ուղիներին ու միջոցներին և գյուղատնտեսության արտադրողական ուժերի այդ գլխավոր տարրերն իրարից բաժանելու և այդ հիմքի վրա անմիջական արտադրողի կրկնակի շահագործում ստեղծելու ձգտմանը։

Ափատիրական իրավունքն Արևելքում, մասնավորապես ֆեոդալական Հայաստանում, մենք հասկանալ կարող ենք այն դեպքում, եթե ելնենք հետևյալ հիմնական դրույթներից։ Հիշյալ իրավունքը և նրա հիմքում ընկած՝ հողատիրությունից և նրանից բխող ջրատիրությունից անկախ առանձին ափատիրության փաստ գոյություն չունի։ Եթե այդ փաստը սովորական կյանքում ձեռք է բերում առանձին իրական երևույթի նշանակություն՝ համապատասխան իրավական արտոնություններով, ապա այդ հասկանալու ու ճիշտ վերլուծելու նարավոր է այն դեպքում, եթե այդ կապենք տվյալ կոնկրետ սոցիալ-տնտեսական հարաբերությունների և վերջիններիցս բխող սեփականության ու դասակարգային փոխհարաբերությունների ձևերի հետ։

Հասարակական աշխատանքի գերատեսչությունը Արևելքում էական դեր է խաղում երկրի տնտեսական կյանքի զարգացման գործում։ Պատմականորեն հաստատված է, որ երկրի հաբստությունն ու արտադրողական ուժի զարգացումը և նրա ծաղկման աստիճանը ուղիղ համեմատական են այդ գերատեսչության գործի դրվածքի բնույթին ու որակին, որի էությունը գլխավորապես ոռոգման միջոցառումներն են։ Հասարակական աշխատանքի բնույթը ժողովրդի աչքում լավ կամ վատ իշխանության, լավ կամ վատ տիրակալ—ֆեոդալի չափանիշն է։ «Այստեղ,— ասում է Մարքսը,— բերքը կախված է լավ կամ վատ կառավարությունից, ինչպես նա Եվրոպայում կախված է լավ կամ վատ եղանակից»¹։

Չնայած որ ռուսական կառավարությունը լավ դիտեր, թե ինչպիսի մեծ նշանակություն ունի ոռոգման տնտեսությունը երկրի զարգացման գործում— նա այնուամենայնիվ ոչ մի կոնկրետ միջոց ձեռք չէր առնում, այլ միայն բավարարվում էր ջրատիրության ու ափատիրության իրավունքի վերաբերյալ համապատասխան օրենքներ գտնելով։ Այդ նպատակով 1840 թվականին Պետական գույքերի մինիստրության վարչությունը տեղական գլխավոր վարչությանն առաջարկում է տեղեկություններ հավաքել ու հաղորդել Անդրկովկասում ջրատիրության ու ոռոգման միջակի մասին։ Տվյալ հարցի մասին գոյություն ունեին մեծ աշխատություններ ու ամբողջ հետազոտություններ, որոնց անդրադառնալ այս հողվածում ես նպատակահարմար չեմ համարում։ Այդ աշխատությունների հիման վրա մի շարք հետազոտողներ հանգել են այնպիսի հետևությունների, որոնք մինչև այժմ էլ անփոփոխ են համարվում։ Մասնավորապես Եղիազարովը մեզ հետաքրքրող հարցի առթիվ հետևյալ եզրակացությանն է հանգում. «Արևելքում ափատիրական իրավունք գոյություն չի ունեցել, տվյալ գետի ավազանում բնակեցված բոլոր համայնքներն էլ միանգամայն իրավահավասար

¹ К. Маркс и Ф. Энгельс, Сочинения, т. IX, էջ 348։

ասար են»¹։ Ինչպես այս հետևությունը, այնպես էլ հողատիրության ու ջրատիրության հարցի վերաբերյալ հետևությունները հիմնված են բացառապես այն իրավական նորմաների վրա, որոնք միշտ էլ իշխող դասակարգի օգտին են կիրառվել։ Բացի դրանից, այդպիսի հետևություններ անելիս ելակետ են ունեցել այն դրույթը, թե իբրև Արևելքում գոյություն չունի հողի ու ջրի մասնավոր սեփականություն, և որպես թե նրանք սուվերենի սեփականություն են կազմում։

Նդիազարովի վերը բերված հետևությունը օրգանապես կապված է նրա պատմական աշխարհայացքի հետ, որը լիովին դրսևորված է Հայաստանի հողատիրության ու ջրատիրության հարցերին վերաբերող հետազոտությունների մեջ։ Նրա կոնցեպցիան առավել ցայտունությամբ արտահայտված է նրա միայլ աշխատության մեջ։ Այստեղ Նդիազարովը գրում է. «X—XIII դարերի իրավունքը և հատկապես տնտեսակարգը վերականգնելու համար ես օգտվում եմ XIX դարի իրավական ու տնտեսական կենցաղից վերցրած տվյալներից։ Հարց է ծագում՝ արդյո՞ք ես բավարար հիմքեր ունեմ X—XIII դարերի տնտեսական ու իրավական կյանքին վերաբերող հարցերը հատկապես այդպիսի եղանակով լուծելու համար։ Ինձ թվում է, որ այդպիսի հիմք կա։ Առաջին և գլխավոր հիմքը Արևելքի ժողովուրդների կոնսերվատիզմն է, որը հասնում է անշարժության ու իներտության։ Նվ Հայաստանն այս տեսակետից բացառություն չի կազմում» (էջ 8)։ Այդ հայացքները հիմնավորելու համար հեղինակը մանրամասն վերլուծում է պետական-վարչական իշխանությունը, հարկային սիստեմը և այլն։ Այսպես, օրինակ, նա գրում է. «Բոլոր գլխավոր հարկերը կառավարությունը վերցնում էր գյուղատնտեսական մթերքներով 5-ից մինչև 10 տոկոս, իսկ քաղաքներում առևտրականներն ու արհեստավորները միայն առևտրից ու արհեստից էին վճարում։ Այդպես է եղել և՛ XII, և՛ XVII, և՛ XIX դարերում»²։

Նման ստատիկ նորմաներ է ընդունում Նդիազարովը հողատիրության ու ջրատիրության նկատմամբ։

Արևելյան հասարակության լճացածությունը հանրահայտ փաստ է, բայց դրա հետ միասին նրա կյանքում որևէ տեղաշարժի ժխտումը, այն տեսակետը, թե նա ամբողջ հազարամյակի ընթացքում սառեցման կետում է կանգնած եղել, — չի համապատասխանում իրականությանը։ Հայաստանի ֆեոդալիզմի պատմության մեջ որոշակի կերպով կարելի է նկատել ֆեոդալիզմի զարգացման էտապներ — այդ զարգացումը բնորոշվում է ֆեոդալական ռենտայի տվյալ տիպի գերակշռությամբ (աշխատավճար ռենտա, մթերքներով հատուցվող ռենտա, դրամական ռենտա)։ Այն փաստը, որ XI—XIII դարերում, որոշ չափով նաև XIV դարում, Հայաստանի մի քանի մասերը նույնպես զարգացած քաղաքային կյանք ունեին, իսկ XV—XVIII դարերից, ինչպես ամբողջ Առաջավոր Ասիայում, այնպես էլ Հայաստանում տնտեսական ռեգրես է սկսվում, և չքանում է զարգացած քաղաքային կյանքը, բայցի դրանից, խոշոր ֆեոդալական տների տրոհումը, եկեղեցական հողատիրության ուժեղացումը և Հայաստանի կյանքի մի ամբողջ շարք այլ փաստեր չէին կարող չանդրադառնալ ֆեոդալական Հայաստանի կյանքի այն բնագավառների ու իրավական նորմաների վրա, որոնց մասին խոսում է Նդիազարովը։ Այն հիման վրա, որ

¹ С. А. Егiazаров, Исследования по истории учреждений в Закавказье, ч. I, Сельская община, Казань, 1889, էջ 259։

² С. А. Егiazаров, Исследование по истории армянского права, Киев, 1919, էջ VI։

Բաղեն-Բաղենի թանգարանում նդիազարովր տեսել է մի միջնադարյան ջրադաց, որ նման է Արարսի հովտում XIX դարում եղած ջրադացին, նա հնարավոր է համարում Անիի X—XIII դարերի ջրադացների և Արարատյան դաշտի XIX դարի ջրադացների կառուցվածքների նույնությունը և հանդում է այն եզրակացության, թե Հայաստանի պատմության այդ ժամանակաշրջանի ջրադացների արտադրողական ուժը միատեսակ է եղել¹։ Այդպիսի հետազոտությունները, հնարավոր է, որ արդարանան էլ աշխատանքի միջոցների բնագավառում, բայց բանն ամենևին այդ չէ, Աշխատանքի միջոցները, նայած թե ինչ հարաբերության մեջ են գտնվում նրանք անմիջական արտադրողական ուժերի բնագավառում,— կարող են տարբեր սոցիալական հարաբերություններ տալ։

Նդիազարովի աշխատություններից թաղվածքներ բերվեցին, որպեսզի նրանց կոնկրետ վերլուծության հիման վրա հնարավոր լինի պարզ կերպով տեսնել Հայաստանի պատմությունն իրավական ուղղությամբ հետազոտողների տեսակետը,— այդ ուղղության ամենացայտուն ներկայացուցիչը նդիազարովն է, որն ամփոփում է այդ ուղղության բոլոր աշխատանքները։ Հիմնական բանը, որ աչքի է ընկնում,— սեփականության բոլոր ձևերի նույնացումն է և պատմական մոտեցման բացակայությունը՝ տվյալ սոցիալ-տնտեսական երևույթը վերլուծելիս։ Բոլոր նորմաները որոշելիս ելակետը բուրժուական հասարակության փոխհարաբերություններն են։

Ինչ թվում է, որ նդիազարովի ամբողջ կոնցեպցիան հիմնված է Անդրկովկասի մի այլ հետազոտողի՝ Իինգելշտեթի սոցիոլոգիական հետևությունների վրա։ Բերում եմ վերջինիս դատողությունները. «Բսկապես,— գրում է նա,— հագլիվ թե կա գեթ մի ասիական պետություն (մենք չենք խոսում, իհարկե, եվրոպական գաղութների մասին), որտեղ ճանաչվեին մասնավոր անձի սեփականատիրական իրավունքները հողի ու ջրի նկատմամբ, և չկա սեփականության այնպիսի իրավունք, որը կրի հողի ու ջրի նկատմամբ բացառիկ իշխանության կնիք (միևնույն է՝ մասնավոր անձին է վերաբերում խոսքը, թե նույնիսկ պետությունը), այլ կա բնության այդ բարիքներից օգտվելու իրավունք, որին մասնակից լինելուց չի զրկվում տեսականապես ոչ ոք, և որից գործնականում օգտվելու ոչ թե մասնավոր կամ պետական, այլ, գլխավորապես, հանրային բնույթ է կրում։ Համայնքի յուրաքանչյուր անդամի իրավունքը՝ ընդհանուրի սեփականությունը կազմող առարկաների նկատմամբ, ապահովում է նույնիսկ կրոնը»²։

Հեղինակն ինքն իրեն հակասում է, երբ նույն գրքի 160-րդ էջում, քննելով Պարսկաստանում գործող իրավունքը, գտնում է, որ այդ իրավունքը խիստ նման է ջրի վերաբերյալ սունիական իրավունքին։ Այդ օրենքներից երևում է, որ որոշ հողամասեր, հողի ու ջրի որոշ կատեգորիաներ վաղուց արդեն զաղարել են համայնական կամ մասնավոր օգտագործման օբյեկտներ լինելուց և դարձել են մասնավոր սեփականություն։

Շիաական օրենքների հիմնական դրույթները հանգում են հետևյալին. ջուրը, որտեղից էլ նա հոսելիս լինի,— գետից, գետակից կամ անձրևաջրից դուրսանալիս լինի, միևնույն է, ընդհանրապես ջուրը ազատ փիճակում չի ենթարկ-

¹ Егнazarов, Исследование по истории армянского права. էջ 66։

² Дингельштедт, Водовлаждение и ирригация, ч. I, Тифлис, էջ 49։

վում ճշգրիտ չափման, չի կարող մասնավոր սեփականություն լինել և կազմում է բնության այնպիսի բարիք, որից օգտվել կարող են ամենքն անարգել կերպով: Զուրր մասնավոր իրավունքի բնագավառն է մտնում այն պահից, երբ նա թողնում է իր ազատ բնական հունը՝ մարդկային աշխատանքի կիրառումից և նրա վրա կապիտալներ ծախսվելուց հետո: Նույնպիսի դրության մեջ է գտնվում նաև հողի մասնավոր սեփականությունը: Ամեն մի պարապ մեռյալ հող իմամի սեփականությունն է համարվում. ով կջրի ու կմշակի այդ հողը, դրանով այն կդարձնի արալան (մշակված), հետևապես, կստանա նրան տիրելու մասնավոր իրավունք¹:

Ֆեոդալական Հայաստանի պատմական կյանքում շիաական օրենքի տարրերի գոյությունը հողատիրության, ջրատիրության և ափատիրության բնագավառում ժխտելու կարիք չկա: Բայց միևնույն ժամանակ պետք է նկատել, որ այդ դրույթը հաստատող բոլոր փաստերը բացառապես հասարակության բարձր խավերին են վերաբերում: Այդ իրավունքներից ու սովորույթներից օգտվելի լի միջակի են միայն առանձին ֆեոդալները, վանքերը, անհատ մարդիկ և միայն հաղվաղեալ՝ գյուղական համայնքները: Որպես օրինակ բերենք X դարի ֆեոդալական Հայաստանի կյանքից մի փաստ, որ մեզ հաղորդում է Օրբելյան պատմիչը. — 932 թվականին Հակոբ եպիսկոպոս Սյունեցիին Փիլիպե իշխանից ջուր է գնում, Ձագեձորից եկող այսպես կոչված՝ Վարարակնի ջուրը, և դրա համար վճարում է 12000 դրամ և մեկ թանկագին քար: Այդ ջրով նա ոռոգում է վանքին պատկանող խոսպն հողերը²: Բնական հունում և ազատ բնության մեջ այդ ջուրը արդեն ֆեոդալի սեփականությունն էր, որն այդ ջուրը վաճառեց Տաթևի վանքին: Վերջինը օգտագործում է ափատիրական իրավունքը, և գյուղական հողերի մի շարք սահմանների միջով ջրանցք փորելով հենց նույն գյուղերի բնակիչների հարկադիր աշխատանքի կիրառումով, ջուրը դարձնում է վանքի մասնավոր սեփականությունը: Սիկնույն ժամանակ, պատմիչը բերում է մի փաստաթուղթ, որի մեջ ափամերձ գյուղացիներին կտրականապես արգելվում է ջրից օգտվել, և նդովվում են այն գյուղացիները, որոնց հողերով անցնում է ջրանցքը, եթե նրանք իրենց բաժինը պահանջեն ջրից, որը նրանց հասնում էր դարձյալ ըստ ափատիրության սովորույթի: Նման երևույթներ մենք տեսնում ենք և հենց նույն պատմիչի մոտ և արձանագրական նյութերում: Պատահում են նաև այնպիսի դեպքեր, երբ իշխանները առատ հողարածինների հետ ամբողջ գետեր, ջրանցքներ, լճեր են նվիրել մեկը մյուսին և վանքերին, դրանով էլ ափարնակ գյուղացիներին զրկելով ջրից օգտվելու հնարավորությունից: Նույն պատմիչ Օրբելյանը հաղորդում է, որ X դարի սկզբին Աշոտ մեծ իշխան Սյունեցին շատ գյուղեր է նվիրում Տաթևի վանքին, և նվիրածի թվում է լինում նաև Ցուրա գետը³: Պատմիչը մեզ հաղորդում է, որ մի քանի անգամ գետը վանքից խլում են, ըստ երևույթի, ափարնակ գյուղացիները: Մենք կարողում ենք, որ XI դարի վերջերին Սենեֆերիմ թագավորը չորրորդ անգամ գետը հաստատում է վանքի անունով⁴:

Նույնպիսի երևույթի ենք հանդիպում մենք ավելի ուշ Բ. Շոպենի մոտ, որը պատմում է, թե Երևանի սարդարը Երևանի ու նրա շրջակայքի բնակիչներ-

¹ Дингельштедт, էջ 160—161:

² Ստ. Օրբելյան, Պատմությունն անհայտն Սիսական, Թիֆլիս, 1910, էջ 253—255:

³ Նույն տեղում, էջ 229:

⁴ Նույն տեղում, էջ 329:

րին ուղղված կարգադրի միջոցով նորոգում է Դավթայի հայտնի ջրանցքը և շահին է ընծայում որպես նվեր¹:

Իսկ ինչ վերաբերում է այն հարցին, թե իբր որևէ գետի ավազանի մեկ համայնքի անդամները միանգամայն իրավահավասար են, և միայն որոշ գեղաբնակներն են իրավասություններ, ապա այդ միայն իրավաբանական մոտեցում է հարցին: Այն բոլոր ազգայություններից վերոգրած փաստերը, որոնց վրա են հիմնված վերը հիշատակված հեղինակների հետազոտությունները, բոլորովին հակառակ են հաստատում: Իրականում հիմնական օրինաչափությունը հանդում է այն բանին, որ տիրակալում է ուժեղը: Ուժեղ ֆեոդալները, բեգերը, համայնքները միշտ էլ ջուրը խլում էին ավելի թուլերից, և շարունակ նրանց միջև տեղի էր ունենում պայքար, որը հաճախ իսկական սպանություններ էր հասնում. ալդ պայքարի հետևանքով հողով լցվում, խափանվում էին երկար տարիների աշխատանքով անցկացված ջրանցքները: Այդ կռիվների մասին մենք տեղեկություններ ունենք IX դարից, — կոնիլ տեղի ուներ Կոշի և Արուճի միջև, և Սմբատ Բագրատունի թագավորը իր աստիճանավորներից Վահրամի որդի Դրիգորին ուղարկում է թշնամի կողմերին հաշտեցնելու և ջուրը նրանց միջև բաժանելու: Նույնպիսի ազդամիջյան կռիվներ են տեղի ունեցել ջրին տիրապետելու համար ֆեոդալական Հայաստանի ամբողջ պատմության ընթացքում: Այսպես, Ալիշանը տեղեկություններ է բերում XVII դարում տեղի ունեցած մի գեղաբի մասին. տոհմով դաճար մի մարդ՝ Հապուշ-Ղասրամ անունով, քանդում է Հրազդան գետից տանուտեր Ավագի անցկացրած առուն և ջուրը դարձնում գետի իր գյուղը: Դրա համար խանը, Ավագի դանդաղաբ լսելով, պատժում է դաճարին, որը դրանից հետո հիվանդանում է: Ասող-ջանալով, Հապուշ-Ղասրամը, վրեժը լուծելով, սպանում է Ավագին: Այս կամ այն գետի ավազանի ջրերը վաղուց բաշխված էին: Ֆեոդալների, բեգերի, համայնքների միջև պայքարը մղվում էր միայն այդ ջրերը վերաբաժանելու համար: Նույնիսկ առաջներում չոռոգվող խոտան հողերը հնարավոր չէր հետագայում սոռոգել, որովհետև ջրերը բաշխված էին: Ով խախտում էր այդ օրենքը և կոչտուրակա՝ բուլսեր էր աճեցնում, պատժի էր ենթարկվում — նրա ցանքերը կամ տնկուտները ոչնչացնում էին և նրան խստիվ պատվիրում՝ այլևս չխախտել օրենքը: Այդ փաստի մասին տեղեկություն է հաղորդում Սիմեոն կաթողիկոսն իր «Ջամբու» գրքում: Նա պատմում է, որ Ղազար կաթողիկոսի ժամանակ, 1847 թվականին, Աղարեկ անունով մի թուրք Սջական գյուղի մոտերքում մի այգի էր տնկել, որը ջրում էր էջմիածնի վանքին պատկանող գետի ջրով: Աղարեկին սատակ չկարողանալով, Ղազար կաթողիկոսը երկու գրավոր և կնքված վկայություն է վերցնում հայ և թուրք վկաներից, որոնք հաստատում են. «Թե գետն այն այգի ոչ է ունեցեալ երբևէ և յատուկ ջուր ունի սակաւ ինչ, որով գցանքս իւրեանց հաղիւ ջրեն. իսկ ի յէջմիածնայ առուն ոչ ունի ջուր, և այգւոյն տեղն յՕշականայ հող է: Զորս և ցուցեալ խանին և արդարարեալ, յորմէ և առեալ հրաման զայցին քակէ ի հիմանէ, և ի բերանոյ նոյն»:

¹ И. Шопен. Исторический памятник состояния Армянской области в эпоху ее присоединения к Российской империи. СПб, 1852, էջ 980.

² Ալիշան, Այրարատ, վեհապետի, 1890, էջ 144:

³ Նույն տեղում, էջ 199:

նույն Աղարեկին ևս զգիր առնուի շարումն, որ այլ ոչ ևս շինեսցէ զայգին և էջմիածնի ջրոյն մի լիցի ձեռնամուխ»¹։

Թվում էր, թե այդ փաստերը հակասում են Սմբատ Գունդստարլի Դատաստանագրքի հոդվածներին (XIII դ.), որոնց համաձայն ամեն ոք իրավունք ունի առու անցկացնելու և նրա վրա ջրադաց շինելու։ Կարելի էր կարծել, թե այդ իրավունքը հետադադրում վերացված էր, եթե մենք շունենայինք մի փաստաթուղթ, որը ակնհայտորեն, ասպացուցում է, որ այդ իրավունքը XIII դարում արդեն լուրջ մի իրավաբանական ֆիկցիոս էր միապետական իրավունքի հարցերում։

Ինչպես հաղորդում է 1206 թվականի մի արձանագրություն, Հայաստանի գերագույն կառավարիչ Զաքարեն քանդեց այն մարդու ջրադացը, որը համարձակվել էր Հոռոմոս վանքին պատկանող աղբյուրի ջուրը ամբարտակել և ջրազաց շինել, դրանով վանքին դրկելով իր ջրանցքից օգտվելու հնարավորությունից²։

Այսպիսով մենք տեսնում ենք, որ ջուրը նույնիսկ իր բնական հունի մեջ, սկսած ակունքներից, XIII դարում ևս առանձին ֆեոդալների ու վանքերի մասնավոր սեփականություն է եղել և այդ սեփականությունը պաշտպանություն է գտել Հայաստանի գերագույն կառավարիչների կողմից։ Հետևապես, խոսք չի կարող լինել ջրատիրության ու ափսոսիրական իրավունքի բնագավառում իրավահավասարության մասին, մանավանդ որ ոչ ամեն ոք կարող էր ջրից օգտվել իր կարիքների համար։

Հայաստանի կառավարիչներն ու նրա առանձին ֆեոդալները միջոցներ էին ձևաբառնում ջրի բաշխումը կարգավորելու համար, որն արտահայտվել է հատուկ ընտրովի մարմին ստեղծելով։ Նրա ֆունկցիաներն էին ջրի բաշխումն ու այդ հողի վրա ծագած վեճերի լուծումը։ Այդ «ընտրովի» մարմինը միշտ էլ ապահովում էր իշխող տարրերի շահերը նրանց ներկայացուցիչների միջոցով, որոնց խոսքը միշտ էլ վճռողական նշանակություն ուներ։ Կոնկրետ, Հայաստանը պարսկա-թուրքական տիրապետության դարաշրջանում (XVI—XIX դդ.) ըստ գետահովիտների հատկանիշի բաժանված էր վարչական միավորների՝ մահալների, ջրային շրջանների, և ամեն մեկի գլուխ էր նշանակված միրաբը կամ ջրալետը՝ ջրի վերակացուն, որն ուներ օգնականներ ջու(ր)վարներ։ Նրանց պարտականությունների մեջ էր մտնում ոռոգման բոլոր հարցերի քննումն ու ջրի բաշխումը։ Վերջին հարցը, իհարկե, ոչ այնպես «իրավահավասարուն» էր լուծվում, ինչպես այդ ուղեցել է ցույց տալ Եղիազարովը։ Ուժեղի իրավունքն ի վնաս թուլի միրաբների ժամանակ էլ իր լիակատար ուժի մեջ էր մտնում։ Իրաւները ոչ միայն շատ հաճախ ի շարն էին գործ դնում իրենց պաշտոնը հողուտ իրենց, այլև քանի որ պարսկական տիրապետության ժամանակ նրանք խաների դրածոներն էին, իսկ ոռոգական տիրապետության ժամանակ գյուղացիության ունեւոր խալից կամ մուրադարներէից էին «ընտրվում», ուստի, պարզ է, նրանք ունեւոր դասակարգի շահերն էին պաշտպանում։ Միրաբների շարակցություններն առանձնապես ուժեղ էին լինում «հավարի» կամ «գիրդալի» ժամանակ (վերջին բառը պարսկերեն նշանակում է ջուրը կտրելը, կանգնեցնելը), երբ սահմանված իրավունքի համաձայն, նրանք, արդի լեզվով արտահայտած, արտակարգ լիազորություններ էին ստանում ջրի պլանային բաշ-

¹ «Ջամբո», էջ 193։

² Ս. Մ. Դան, Շիրակ, էջ 22։

խում կատարելու այն հաշվով, որ ջուրը առաջին հերթին տալին խիստ կարիք ունեցող համայնքներին, իսկ հետո ավելի քիչ կարիք ունեցողներին: Ինչպես նշել ենք, Երզնկայի խիստ անապատային շրջանում, — մի քանի օգտակար խեղդերով հայտնաբերվելու իրավունքից, անխնա զրկում էր ջրից այն համայնքներին. որոնք բնակավայրերի ժամանակ նրան ղեկ էին քվարկել, կամ նա բացահայտ կերպով ու առանց քաշվելու ոռոգման ջուրը վս. հատրի առարկա էր դարձնում: Նշելով այդ, Երզնկայի շրջանում, որ հենց այդ է «սեփականություն» օրենքի» կոթողներ, իսկ նա այդ հանգամանքը լուրջ միտքով անբարեխղճությամբ է բացատրում: Այնինչ միտքային կոթողներ միանգամայն պարզ է այն հանգամանքից, որ XIX դարի 40-ական թվականներին միտքային սկսեցին բնակել միայն ոռոգականության պահանջով: Բնակչությունը, բացի նրանց պահանջության ավելորդ ծախսերից, ոչ մի օգտակար բան չէր տեսնում նրանց գործունեության մեջ:

Ջրի օգտագործման հարցը մեկն է այն տարրերից, որոնք մտնում են արևելյան ասիայի արևելյան իրավունքի հասկացության մեջ: Այս առթիվ մենք կրկինք նշել ենք, որ Երզնկայի կարծիքը, քանի որ նա, ինչպես վերը նշվեց, իր աշխատության մեջ կոնկրետացրել է ջրատիրության և նրա շուրջն ստեղծված հարաբերությունների հարցին վերաբերող բոլոր հիմնական հետևությունները: Ժխտելով հողի մասնավոր սեփականության գոյությունը, Երզնկայի պետք է բնական, որ ջրի օգտագործումը բոլորի համար էլ ազատ էր: Այս հարցում նա մատնանում է Զելինսկու հետադոտությունը, որը գրում է, թե հասարակությունն իրավունք ունի նոր ջրանցքներ ու առուներ անցկացնելու ամեն տեղ, առանց նախապես ստանալու հողատերերի համաձայնությունը: Դրանից Երզնկայի պետք է հրապարակում է, որ ոչ մի համայնք, ոչ մի հողատեր իրավունք չունի արգելելու ջրի «ճանապարհ» կամ ջրի «օգտագործումը». իր հողի միջով ջուրը թողնելու համար հողատերն իրավունք չունի դրամական վարձատրություն պահանջելու, և որպես ապացույց հետևյալ օրինակն է բերում. «Ջրվանդիի դավառում Վերին-Չալու գյուղը բացահայտեին կտրված է բեկական առուներով, որոնք 45 դեպատին համեմատելի են բունում, և գյուղացիները դրա ղեկը արգելք հարուցել չեն կարող»: Երզնկայի պետք է, որ բեկերը նույնիսկ թույլ չեն տալիս, որ գյուղացիներն օգտվեն այդ առուների ջրից: Երբ հարցն այսպես է դրվում, ևս ավելորդ էմ համարում քննարկել այն՝ ապացուցելու համար, թե հասարակության հատկապես որ դասի ու դասակարգի համար գոյություն ունի տվյալ իրավունքը և ով կարող է անարգել օգտվել այն հնարավորություններից, որ Երզնկայի պետք է «դարձնել ստեղծված, վրաց Վախթանգ թագավորի կողմից XVIII դարում օրինականացված ժողովրդական սովորույթ»: Վրաց Վախթանգ թագավորի օրենքների I գրքի 169-րդ հոդվածում ասված է հետևյալը. «Երեք բան, այն է՝ ջուրը, փայտը և հողը ոչ ոքի համար արգելված չեն հաջորդ 170-րդ հոդվածի հիման վրա: Թագավորը կարող է հողը ջրելու և բերքատվությունը բարձրացնելու համար ջրանցքներ անցկացնել ամեն մեկին պատկանող այգիներով ու դաշտերով, և ոչ ոք իրավունք չունի դրանք չցնելու, որպեսզի չզրկարի հացի տուրքը. որ գյուղին թագավորը շնորհի ու հատկացնի սույն ջրանցքները, նրան էլ բացառապես պատկանելու և

¹ С. А. Егнazarов, Исследования по истории учреждений в Закавказье. № 257.

² Дингельштет, № 70.

դրանք, և ոչ ոք չի կարող արգելել դրանց նորոգումն ու մաքրումը»¹։ Սովորաբար այդ հոդվածն օգտագործում են ապացուցելու համար, թե Վրաստանում գոյություն չի ունեցել հողի մասնավոր սեփականություն, իսկ տվյալ դեպքում՝ թե լրացակայել է ափատիրական իրավունքը և ջրի օգտագործման արգելքը։ Բայց նրանք մոռանում են մի էական հանգամանք՝ այն, ինչ մատչելի է և հաջողվում է թագավորներին, — և՛ իհարկե, վերջիններս ունեն համապատասխան ուժ, օրինակ, կարող են ֆեոդալին ստիպել թույլ տալու ջրանցք անցկացնել նրա հողի միջով, — առաջինը իրագործելու գյուղական համայնքի, առավել ևս առանձին գյուղացու համար հնարավոր չէ։

Ջրանցքներ անցկացնելու իրավունքի հասկացողությունը խիստ հակասական է հին հայկական օրենքներում։ Սմբատ Գունգստաբլի Դատաստանագրքի (XIII դ.) 3-րդ հոդվածը ամենքին էլ թույլ է տալիս ուրիշի հողով առու կամ ջրանցք անցկացնել, առանց դրա համար հողատիրոջից թույլտվություն ստանալու և ոչ մի պարտավորություն չստանձնելով նրա առաջ, թեև ըստ սովորույթի իրավունքի ընդունված է ջրի մի մասը տալ նրան, ում հողում ջրանցք է անցկացվում։ չի հատուցվում նաև ջրանցք անցկացնելու հետևանքով հողատիրոջը պատճառած վնասը։ Ընդհակառակը, Դատաստանագրքում ասված է, որ ջուրը պատկանում է միայն նրան, ով այն տարել է իր սեփական կալվածքը²։ Իսկ Մխիթար Գոշի Դատաստանագրքում, ըստ № 402 ձեռագրի, որը հրատարակելի է Բաստամյանցի համարում է ամենահինը և այն հրատարակել է որպես հիմնական տեքստ (գիրք II, հոդված 10), գետը հողատիրոջ սեփականությունն է համարվում միայն նրա կալվածքի սահմաններում, իսկ այնուհետև այն հողատերերի սեփականությունն է, որոնց հողերում շարունակում է հոսել։ Բոլորովին նույնն է Վախթանգի օրենքների բովանդակությունը (գիրք 3, էջ 181)։ Բայց Մխիթար Գոշի Դատաստանագրքի տեքստը (ձև. № 488 և 749) հակառակն է պնդում՝ գետը պատկանում է այն հողատիրոջը, որի հողումն է գտնվում գետի ակունքը, և ոչ թե նրանց, որոնց հողերում հոսում է այն³։ Այդ հակասական տեղեկությունները ապացուցում են, որ ֆեոդալական Հայաստանում գոյություն չեն ունեցել ջրատիրության կամ ջրային սեփականության վերաբերյալ միատեսակ պայմաններ ու հասկացություններ, և որ էականը արտագրողների սխալները չեն, ինչպես այդ պնդում է Բաստամյանցը։

Վերջապես, կամենում ենք կանգ առնել ափատիրության իրավունքին վերաբերող հարցի նաև մի այլ կողմի՝ վերին և ներքին գյուղերի միջև ջրօգտագործման բնագավառում գոյություն ունեցող փոխհարաբերությունների վրա։ Ջրի պակասության և ֆեոդալական անարխիական իշխանության կողմից վարչական հսկողության բացակայության ընդհանուր ֆոնի վրա ամեն մի վերին շրջան կամ վերին գյուղ աշխատում էր ամառվա շրջանում ավելի մեծ քանակությամբ ջուր վալթել, քան նրան հասնում էր։ Այդպիսով խախտվում էր ջրի հերթական օգտագործման ժամանակ իրավահավասարության սկզբունքը, և, հետևապես, միանգամայն պարզ է, որ խախտվում է նաև այս կամ այն գետի սեփականում համայնքների ներսում ջրի իրավահավասար օգտագործման վերաբերյալ կարծիքը։ Շատ հաճախ վերին գյուղերն իրենց միջոցներով ջրանցք-

¹ «Сборник законов грузинского царя Бахтанга», Тифлис, 1887, էջ 50։

² Մ. Գ ո շ ի Դ ա տ ա ր ի. Դատաստանագրքի, հրատ. Ա. Դևույանի, Էջմիածին, 1918, էջ 20։

³ Մ խ ի Թ ա Ր Գ ո շ, Դատաստանագրքի, մ. 11, էջ 327։

ներ ու առուներ էին անցկացնում, դրանով էլ հենց ջրի բացառիկ օգտագործման իրավունք ստանում, որչափով նրանք այդ գործի մեջ էին գնում իրենց աշխատանքը և ծախսեր կատարում: Դրանից տուժող ներքևի գյուղերը օգնություն էին խնդրում կառավարիչներից, ֆեոդալներից և ուրիշ անձերից, կամ թե՛ չէ, սովորաբար, և թե նրանք ուժ ունեին, իրենք էին հաշիվ տեսնում վերևի գյուղերի հետ: Տիպիկ դեպքերից մեկը բերում է Ն. Մառը իր «Վիշապներ» գրքում: Գեղարդի Վարդան վարդապետը ուզում էր վերականգնել ջրի նախկին իրավունքը: Նա վերանորոգեց Վանքի գյուղ հին ջրամբարը՝ վանքի կարիքների համար, բայց այդ վնասում էր ներքին գյուղերին: Քանի որ վանքն այլևս ուժ չունեի ջրօգտագործման իր հին իրավունքները պաշտպանելու համար, ներքևի գյուղերի ներկայացուցիչ Աշրաֆ բեկը քանդեց վերանորոգված «գյուղ» և ջուրը բաց թողեց:

Այսպիսով, այդ իրավունքը ևս, ինչպես և հողօգտագործման ու ջրօգտագործման «վաղեմության ու հավասարության» իրավունքը, միայն այն ժամանակ էր իրական և համապատասխանում էր «սովորույթի իրավունքին», երբ դրանք օգտագործում էին իրենց իրավունքները պաշտպանելու համար համապատասխան նախադրյալներ ունեցող անձինք կամ համայնքները:

СУЩЕСТВОВАЛО ЛИ БЕРЕГОВОЕ ПРАВО В ФЕОДАЛЬНОЙ АРМЕНИИ?

Г. Е. ГЮЛАМИРЯН

(Р е з ю м е)

Поставив этот вопрос, автор изучает его на основании письменных источников—судебников Мхитара Гоша и Смбата Гундетабля, лапидарных надписей и других материалов. Критикуя точку зрения представителя юридической школы С. А. Егназарова о наличии берегового права, автор приходит к следующим выводам. Береговое право и право на владение и пользование водой нельзя разделить от права на землю, так как первое опиралось на второе и исходило от него.

В феодальной Армении береговое право не было твердо установлено и не получило завершенной формы; поэтому в источниках можно найти весьма противоречивые сведения как о наличии этого права, так и в особенности о его применении.

Население сел, расположенных на берегах рек, имело право пользоваться водой для орошения своих полей и садов, но оно было лишено права пользоваться водой каналов, проведенных феодалами и монастырями, хотя эти каналы проходили по территории их сел. Крестьяне не могли проводить оросительные каналы из водных источников, находившихся в пределах земельных владений феодалов.

Рента от орошаемых земель составляла $\frac{1}{5}$ часть дохода и вдвойне превышала ренту от неорошаемых земель, от которых взималась десятина. При отсутствии твердо установленного берегового права часто действовало «право сильного», что в свою очередь открывало путь к новым злоупотреблениям и насилиям над угнетенными крестьянами.